ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/46

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.09.2017թ. թիվ 03/26-3/16466-17 գրությամբ «Կոնսէլ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 01.09.2017թ. թիվ ԴԴ-3-Ե-5950 գրության հիման վրա, 11.09.2017թ. թիվ 03/26-3/16466-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Կոնսէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ:

2. <u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատական դեպարտամենտը 01.09.2017թ. թիվ ԴԴ-3-Ե-5950 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Ներկայացնում եմ ՀՀ դատական դեպարտամենի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/05» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Կոնսէլ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ դատական դեպարտամենի ներկայացուցիչ Արթուր Եղիազարյանը:

3. <u>«Կոնսէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կոնսէլ» ՍՊԸ-ն 12.09.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուի կողմից տեխնիկական բնութագրով ներքին բլոկի չափսերը սահմանվել են առանց որոշակի միջակայքի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս պարամետրը չի հանդիսանում պարտադիր տեխնիկական չափորոշիչ, քանի որ հիմնականում տարբեր արտադրողների մոտ դրանք չեն համընկնում, և մեր կողմից առաջարկված մոդելի և պահանջվող պարամետրերի միջև առկա տարբերությունը չնչին է (պահանջվող չափսեր. 745մմx250մմx195մմ, առաջարկվող մոդելի չափսեր. 715մմx285մմx194մմ), ընկերությունը ներկայացրել է իր առաջարկը:

«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-10/05» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգով ՀՀ Դատական Դեպարտամենտ ՊԿՀ-ի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգի հրավերում պահանջվող օդորակիչի համար սահմանվել է հզորության պարամետր 2 ստանդարտով՝ BTU (British Thermo Unit/h – Բրիտանական Ջերմային Միավոր/ժամում) և կՎտ: Ըստ փոխարկման աղյուսակի՝ պահանջվող 9000BTU-ն համարժեք է 2.6376կՎտ-ի: Տարբեր արտադրողների մոտ այս չափորոշիչի թվային կլորացումը տարբեր եղանակով է իրականացվում, որոշ դեպքերում՝ դեպի վերև 2.7, որոշ դեպքերում՝ դեպի ներքև 2.6: Այդ

իսկ պատճառով ընկերությունը ներկայացրել է իր առաջարկը՝ հիմնվելով «9000BTU» պահանջի վրա, որն ըստ առաջարկված ապրանքի արտադրողի համարժեք է 2.6կՎտ-ի:

Ձմռան պայմաններում աշխատանքային ռեժիմի -7 և -8 պարամետրերի տարբերությունը մեր կողմից էական չի համարվել, քանի որ այդ չնչին շեղումը կարելի է արձանագրել նույնիսկ 2 տարբեր տեխնիկական սարքերով չափագրման արդյունքում: Ավելին, եթե այս պարամետրը Պատվիրատուի կողմից կարևորվեր, ապա պետք է հիմք ընդունվեր ՀՀ ՇՆ IV-12.02.01-04 նորմատիվով Երևան քաղաքի համար սահմանված հաշվարկային ջերմաստիճանը՝ -19, ինչպես նաև ինժեներական լրացուցիչ այլ պարամետրեր, ինչպիսիք են օդի հարաբերական խոնավություն և այլն:»:

Ի լրումն 12.09.2017թ. գրությամբ ներկայացված դիրքորոշման՝ Ընկերությունը 27.09.2017թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«1. ՀՀ «Դատական Դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից 23.09.2017թ.-ին տրամադրված տեղեկանքում, ինչպես նաև «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-10/05» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգով ՀՀ Դատական Դեպարտամենտ ՊԿՀ-ի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգի հրավերում սահմանված է պահանջվող օդորակիչի հզորության երկու ստանդարտ՝ 9000BTU (British Thermo Unit/h – Բրիտանական Ջերմային Միավոր/ժամում) և 2,7 կՎտ: Ըստ փոխարկման աղյուսակի՝ 1 BTU-ն հավասար է 3,412 Վ, հետևաբար պահանջվող 9000BTU-ն կազմում է 2.6376կՎտ և ոչ թե 2.7 կՎտ: Այդ իսկ պատճառով ընկերությունը ներկայացրել է իր առաջարկը՝ հիմնվելով «9000BTU» պահանջի վրա և առաջարկել Carrier 42QHA009N մոդելը, ինչը հավաստվում է արտադրողի տեխնիկական բնութագրով /կցված է/:

2. Պատվիրատուի կողմից ներկայացված հիմնավորումը ներքին բլոկի չափսերի վերաբերյալ համարում ենք չհիմնավորված, քանի որ այն չի կարող բխել և հաշվարկվել հովացման ռեժիմի հզորությունից ելնելով: Օդորակման համակարգի բազմաթիվ արտադրողների մոտ տարբեր հովացման ռեժիմի հզորություն ունեցող սարքավորումներն արտադրվում եմ միևնույն չափսերի ներքին բլոկերով: Մասնավորապես Միցուբիսի Էլէկտրիկ 2,5 կՎտ, 3,5 կՎտ, 5,0 կՎտ, 6,1 կՎտ հզորություն ունեցող օդորակիչների ներքին բլոկներն արտադրվում են նույն չափսերով՝ 890x233x307մմ, ինչում կարելի է համոզվել այցելելով Միցուբիսի Էլէկտրիկ պաշտոնական կայքը հետևյալ հղումով http://www.mitsubishi-aircon.ru/product/products/rac.shtml:

3. Ձմռան պայմաններում աշխատանքային ռեժիմի ջերմաստիճանի պահանջի սահմանումը համարում ենք խտրական և չհիմնավորված, քանի որ այն սահմանելուց Պատվիրատուն չի առաջնորդվել ՀՀ գործող նորմերով, որտեղ Երևան քաղաքի համար հաշվարկային ջերմաստիճանը սահմանված է -19 0C /տես. ՀՀ քաղաքաշինության նախարարի թիվ 83-Ն հրաման ՀՀՇՆ IV-12.02.01-04 «ՋԵՌՈՒՑՈՒՄ, ՕԴԱՓՈԽՈՒՄ ԵՎ ՕԴԻ ԼԱՎՈՐԱԿՈՒՄ» շինարարական նորմերը հաստատելու մասին, հավելված 1, աղյուսակ «Արտաքին Օդի Հաշվարկային Հարաչափերը», սյունակ «Բ հարաչափեր», ենթասյունակ «օդի ջերմաստիճանը* 0C», կետ 19/.

Հիմք ընդունելով վերոնշյալ փաստարկները՝ գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից չեն պահպանվել Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետով սահմանված դրույթները:»:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության ներկայացուցիչներ Լևոն Բոգդանյանը, Առաքելյան Նարինեն, Անժելա Դավթյանը և Ռուբեն Մարութխանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/46 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 11.09.2017թ. թիվ 03/26-3/16466-17 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ դատական դեպարտամենտի 01.09.2017թ. թիվ ԴԴ-3-Ե-5950 գրությունը, «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-10/05» գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-10/05» գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 23.08.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 3, 29.08.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 4, 30.08.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 5 և 01.09.2017թ. կայացած նիստի N 6 արձանագրությունները, Պատվիրատուի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի վերաբերյալ տեղեկանքը, Ընկերության գրավոր դիրքորոշումները.

ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-10/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Կոնսէլ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին ներկայացված հայտի N4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-10/05» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին:

Հանձնաժողովը՝

- 23.08.2017թ. կայացած նիստի N 3 արձանագրության 2-րդ կետով Ընկերությանը ճանաչել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:
- 29.08.2017թ. կայացած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով՝ ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է՝ 1-ին չափաբաժնի մասով «Կոնսէլ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընկերությունը 28.08.2017թ. Ընթացակարգին ներկայացված հայտի N 6.1 հավելվածով՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը՝ հետևյալ բովանդակությամբ. «տաքացնող և սառեցնող, սառնազդակ՝ գազ ֆրեոն R410A սառեցման ռեժիմում հզորությունը 2600 Վտ, ջեռուցման ռեժիմում 2800 Վտ, առավելագույն սպառվող հզորություն՝ սառեցման ռեժիմում 820 Վտ, ջեռուցման ռեժիմում 770 Վտ, օդի հոսքը՝ առավելագույնը 510մ^3/ժամ, էներգոէֆեկտիվություն EER 3.21, ձայնի նվազագույն մակարդակը՝ 26դբ, ձայնի առավելագույն մակարդակը՝ 40դբ, քնի ռեժիմով, հեռակառավարման վահանակով, ավտոմատ վերագործարկման հնարավորությամբ, ինքնադիագնոստիկա, շահագործման համար թույլատրելի արտաքին ջերմաստիճանը տաքացման ռեժիմում՝ -7-+24^{0}C, սառեցման ռեժիմում՝ +18-+43^{0}C, չափսեր՝ ներքին բլոկ՝ 285x715x194/բxլxխ/, արտաքին բլոկ՝ 550x700x270/բxլxխ/, արտադրության երկիր՝ Չինաստան, երաշխիք 1 տարի»:

Նույն արձանագրության 3-րդ կետով՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ

ենթակետով սահմանված՝ մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի անվանումն և տեխնիկական բնութագիրը հրավերով սահմանված ապրանքի անվանմանը և տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով հանձնաժողովը դիմել է պատասխանատու ստորաբաժանմանը:

30.08.2017թ. կայացած հանձնաժողովի նիստի N 5 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ մասնակցի կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը հրավերով սահմանված ապրանքի անվանմանը և տեխնիկական բնութագրին համապատասխանելու վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին՝ մասնավորապես.

1. ներքին բլոկի չափսերը չեն համապատասխանում,

2. սառեցման ռեժիմում նվազագույն հզորությունը սահմանված է 2.7 կՎտ, իսկ առաջարկվող ապրանքի հզորությունը սառեցման ռեժիմում՝ 2.6 կվտ է,

3. աշխատանքային ռեժիմը ձմռան պայմաններում սահմանված է -8, մինչդեռ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրով աշխատանքային ռեժիմը ձմռան պայմաններում սահմանված է -7:

Նույն արձանագրության 3-րդ կետով հանձնաժողովը՝ Կարգի 47-րդ կետի համաձայն արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար «Կոնսել» ՍՊԸ-ին դիմելու նպատակով, որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:

01.09.2017թ. կայացած նիստի N 6 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ «Կոնսէլ» ՍՊԸ-ն մինչև սահմանված ժամկետի ավարտը չի ներկայացրել արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները:

Նույն արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ Խորհրդի այն հարցին, թե Պատվիրատուի կողմից ինչն է հիմք ընդունվել գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագիրը կազմելիս, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ ապրանքի տեխնիկական բնութագիրը կազմելիս հիմք է ընդունել Պատվիրատուի կողմից նախորդ տարիներին ձեռք բերված նմանատիպ ապրանքի տեխնիկական բնութագրերը, թեև հաջորդ նիստում Խորհրդին տրամադրեց ձեռք բերվող ապրանքի՝ օդորակիչների (9000BTU) հզորության տեխնիկական բնութագրի վերաբերյալ տեղեկանքը:

Ներկայացված տեղեկանքում նշված է, որ ներքին բլոկի չափսերը ներկայացված են՝ ելնելով հովացման պահանջվող հզորությունից, իսկ աշխատանքային ռեժիմը ձմռան պայմաններում նախատեսված անռվազը՝ -8:

Ընկերության ներկայացուցիչը Պատվիրատուի կողմից ներկայացված տեղեկանքի վերաբերյալ հայտնեց, որ Պատվիրատուի կողմից տրամադրված տեղեկանքում ներկայացված է ձեռք բերվող օդորակիչների հզորության հաշվարկման միաժամանակ երկու մեխանիզմ, որոնցից յուրաքանչյուրը պետք է դիտարկվի առանձին-առանձին և ոչ թե հանրագումարային տարբերակով: Հաշվարկման 1-ին տարբերակի դեպքում հիմք է ընդունվել տարածքի ծավալը 30 ՎՏ 1 խմ-ի համար: Այս տարբերակը չի կարող ճշգրիտ համարվել, քանի որ հաշվարկման ժամանակ հաշվի չեն առնվել համապատասխան տարածքի ջերմատեխնիկական առանձնահատկությունները, մասնավորապես՝ լույսի բաշխվածությունը, ապակեպատումը, ներքին պատերի մակերեսը և այլն և այս մեխանիզմի կիրառման դեպքում պահանջվող օդորակչի հզորությունը կկազմի 1,55 Կվտ կամ 5300 BTU: Հաշվարկման 2-րդ՝ դասական տարբերակի դեպքում, պահանջվող օդորակչի հզորությունը կկազմի 1,2 Կվտ կամ 4100 BTU:

Ընկերության ներկայացուցիչը Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ պնդեց Խորդրդին ներկայացված գրավոր դիրքորոշումը հայտնելով հետևյալը.

1. Պատվիրատուի կողմից 23.09.2017թ. տրամադրված տեղեկանքում, ինչպես նաև «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-10/05» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգով ՀՀ Դատական Դեպարտամենտ ՊԿՀ-ի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգի հրավերում սահմանված է պահանջվող օդորակիչի հզորության երկու ստանդարտ՝ 9000BTU (British Thermo Unit/h – Բրիտանական Ջերմային Միավոր/ժամում) և 2,7 կՎտ: Ըստ փոխարկման աղյուսակի՝ 1 BTU-ն հավասար է 3,412 Վ, հետևաբար պահանջվող 9000BTU-ն կազմում է 2.6376կՎտ և ոչ թև 2.7 կՎտ: Այդ իսկ պատճառով ընկերությունը ներկայացրել է իր առաջարկը՝ հիմնվելով «9000BTU» պահանջի վրա և առաջարկել Carrier 42QHA009N մոդելը, ինչը հավաստվում է արտադրողի տեխնիկական բնութագրով:

2. Պատվիրատուի կողմից ներկայացված հիմնավորումը ներքին բլոկի չափսերի վերաբերյալ անհիմն է, քանի որ այն չի կարող բխել և հաշվարկվել հովացման ռեժիմի հզորությունից ելնելով: Օդորակման համակարգի բազմաթիվ արտադրողների մոտ տարբեր հովացման ռեժիմի հզորություն ունեցող սարքավորումներն արտադրվում են միևնույն չափսերի ներքին բլոկերով: Մասնավորապես Միցուբիսի Էլէկտրիկ 2,5 կՎտ, 3,5

կՎտ, 5,0 կՎտ, 6,1 կՎտ հզորություն ունեցող օդորակիչների ներքին բլոկներն արտադրվում են նույն չափսերով՝ 890x233x307մմ, ինչում կարելի է համոզվել այցելելով Միցուբիսի էլէկտրիկ պաշտոնական կայքը հետևյալ հղումով http://www.mitsubishi-aircon.ru/product/products/rac.shtml:

3. Ձմռան պայմաններում աշխատանքային ռեժիմի ջերմաստիճանի պահանջի սահմանումը խտրական և չհիմնավորված, քանի որ այն սահմանելուց Պատվիրատուն չի առաջնորդվել ՀՀ գործող նորմերով, որտեղ Երևան քաղաքի համար հաշվարկային ջերմաստիճանը սահմանված է -19^{0}C, համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարի ՀՀՇՆ IV-12.02.01-04 «ՋԵՌՈՒՑՈՒՄ, ՕԴԱՓՈԽՈՒՄ ԵՎ ՕԴԻ ԼԱՎՈՐԱԿՈՒՄ» շինարարական նորմերը հաստատելու մասին 04.08.2004թ. թիվ 83-Ն հրամանի հավելված 1-ի՝ «Արտաքին Օդի Հաշվարկային Հարաչափերը» աղյուսակի «Բ հարաչափեր» սյունակի, «օդի ջերմաստիճանը* 0C» ենթասյունակի,՝19-րդ կետի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 13-րդ հոդվածի՝

- 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:
- 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Խորհուրդը արձանագրում է, որ ըստ փոխարկման աղյուսակի՝ 1 BTU-ն հավասար է 3,412 Վ, այսինքն, գնման ենթակա 9000BTU հզորությամբ օդորակիչի պահանջի առկայության դեպքում՝ հզորությունը սառեցման ռեժիմում կազմում է 2.6376կՎտ, մինչդեռ Հրավերով այն սահմանվել է 2,7 կՎտ:

Խորհուրդը արձանագրում է նաև, որ օդորակման համակարգի բազմաթիվ արտադրողների մոտ տարբեր հովացման ռեժիմի հզորություն ունեցող սարքավորումներն արտադրվում են միևնույն չափսերի ներքին բլոկերով, հետևաբար խորհուրդը գտնում է, որ

Պատվիրատուի այն պնդումը, որ ներքին բլոկի չափսերը տեխնիկական բնութագրում ներկայացված են՝ ելնելով հովացման պահանջվող հզորությունից, անհիմն է:

Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով գնման ենթակա առարկայի բնութագրերը օբյեկտիվորեն հիմնավորված չեն և համարժեք չեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվել է տվյալ գնումը, ինչպես նաև գնման ենթակա առարկայի հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը սահմանելիս, Պատվիրատուն հաշվի չի առնել Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջները:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ մասով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Կոնսէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 11.09.2017թ. թիվ 03/26-3/16466-17 գրությամբ «Կոնսէլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ